Դեկտեմբեր ամսվա տոնացույց

1. Դեկտեմբերի 17-ին Ձմեռ Պապի այցելություն և Ամանորյա շնորհավորանքներ Դոբրի գյուղում:
2. Դեկտեմբերի 21-ին Բարեգործական երեկո «Մեր եկեղեցին մեր երեխաների» համար խորագրով: Սկիզբը ժամը 18:00, հրավիրում ենք բոլորին:
3. Դեկտեմբերի 21-ին Ձմեռ պապին շնորհավորում է բոլորին Նոր Տարվա կապակցությամբ Մոսկվայում: Սկիզբը 18:30, Կուրիայի դահլիճ, հրավիրում ենք ձեր երեխաների հետ:
4. Դեկտեմբերի 24-ին Ճրագալույցի փառավոր Սուրբ Ծննդյան Պատարագ: Ժամը 15:00
5. Դեկտեմբերի 25 Շնորհավոր Սուրբ Ծնունդ Հիսուս Քրիստոսի: Ծննդյան փառավոր Սուրբ Պատարագ: Սկիզբը 15:30: Տեղի կունենա Ջրօրհնեքին Հիսուսի քավորի վիճակահանություն:
6. Դեկտեմբերի 31 նախատոնական սուրբ պատարագ: Սկիզբը՝ ժամը 13:00
7. Հունվարի 1-ին ս.Պատարագ, Տոն տնօրինության Հիսուսի: Սկիզբը՝ ժամը 13:00
8. Հունվարի 6-ին Ջրօրհնեք, Ձայնավոր ս.Պատարագ՝ ժամը 13:00:
9. Հունվարի 7-ին մեռելոց Պատարագ և պաշտոն հանգստի՝ ժամը 13:00:
10. Ծննդյան և Ամանորյա տոների շրջանը տնօրհնեքի ժամանակաշրջան է: Ցանկացողները դիմեն վարդապետին:

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի

Մեր հասցեն՝ г. Москва, ул. Малая Грузинская д. 19/2

Հեռախոսներ՝

+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)

+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)

E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it

http:/armcatholik.ru

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սրբերի հիշատակություն

Ամսաթիվ 16.12.2014թ.

Ս. Թեոդոմպոս եպիսկոպոսի, Ս. Թեովնաս վկայի և չորս զինվորների՝ Ս. Բասոսի, Ս. Եվսեբիոսի, Ս. Եվտիքեսի և Ս. Բասիլիդեսի հիշատակության օր

Ս. Թեոդոմպոս եպիսկոպոսը և Ս. Թեովնաս վկան նահատակվել են 303 թվականին Նիկոմիդիայում Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ: Լինելով քրիստոնյա՝ Ս. Թեոդոմպոս եպիսկոպոսն ընդդիմացել է թագավորին և չի երկրպագել կուռքերին, որի համար վառված հնոցի մեջ է նետվել: Սակայն սուրբը հրաշքով փրկվել է, և թագավորն ավելի է զայրացել և նրան բանտ նետել: Այդ ժամանակ թագավորը կանչել է Թեովնաս մոգին և խնդրել, որ կախարդություններով հաղթի Ս. Թեոդոմպոսին: Սակայն Թեովնասը, պարտվելով վերջինից, հավատում է Հիսուս Քրիստոսին, որի պատճառով էլ կենդանի թաղվում է խոր փոսում, իսկ Ս. Թեոդոմպոսը գլխատվում է:

Ս. Բասոսը, Ս. Եվսեբիոսը, Ս. Եվտիքեսը և Ս. Բասիլիդեսը նահատակվել են նույն ժամանակ Նիկոմիդիայում, Դիոկղետիանոսի հալածանքների ժամանակ: Նրանք այն չորս զինվորներն էին, ովքեր պահպանում էին Ս. Թեոդոմպոսին: Տեսնելով նրա համբերությունն ու անկոտրում հավատը՝ դարձի են գալիս և քրիստոնյա դառնում: Իմանալով այդ մասին՝ Դիոկղետիանոս կայսրը կանչում է նրանց, զրկում պատիվներից, հարստություններից և բանտարկում: Անասելի տանջանքներ կրելուց հետո Քրիստոսի երանելի վկաները նահատակվում են:

http://www.araratian-tem.am/

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եբրայեցիներ 1, 1-14

1 Աստուած բազմապիսի ձեւերով եւ այլազան
օրինակներով նախապէս խօսեց մեր հայրերի հետ
մարգարէների միջոցով. 2այս վերջին օրերին մեզ
հետ խօսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ
նշանակեց ամէն ինչի, եւ որի միջոցով ստեղծեց
տիեզերքը։ 3Նա, որ լոյսն է նրա փառքի եւ բուն
պատկերը նրա էութեան, որ իր խօսքի զօրութեամբ
հաստատ է պահում տիեզերքը։ Նա մեր մեղքերի
մաքրումը կատարելուց յետոյ, նստեց Աստծու
մեծութեան աջ կողմում՝ բարձունքներում։ 4Նա
այնչափ գերազանց եղաւ հրեշտակներից, որ
նրանցից շատ աւելի անուն ժառանգեց։ 5Արդարեւ,
հրեշտակներից որի՞ն երբեւէ ասաց. 6Եւ
դարձեալ. 7Եւ դարձեալ, երբ անդրանկին աշխարհ է
մտցնում, ասում է. 8Իսկ հրեշտակների մասին էլ
ասում է. 9Իսկ Որդու մասին ասում
է. 10Նաեւ՝ 11Հրեշտակներից որի՞ն երբեւէ ասաց. 12Չէ՞
որ բոլորն էլ սպասարկող հոգիներ են, որոնք
ուղարկւում են ի սպասաւորութիւն նրանց, որ
ժառանգելու են փրկութիւնը։

17 Յիսուս ասաց նաեւ իր աշակերտներին.
«Անկարելի է, որ գայթակղութիւն չգայ, բայց վա՜յ
նրան, որի ձեռքով կը գայ։ [2]Նրա համար լաւ կը լինէր,
եթէ իր պարանոցից երկանաքար վէմ կախուէր, եւ նա
ծովը գցուէր, քան թէ այս փոքրիկներից մէկին
գայթակղեցնէր։ [3]Զգո՛յշ եղէք ձեր անձերի
համար»։ [4]«Եթէ քո եղբայրը մեղանչի, սաստի՛ր նրան.
եւ եթէ զղջայ, ների՛ր նրան։ [5]Եւ եթէ եօթն անգամ
մեղանչի քո դէմ եւ եօթն անգամ դառնայ քեզ եւ ասի՝
զղջում եմ, ների՛ր նրան»։ [6]Եւ առաքեալները Տիրոջն
ասացին. «Աւելացրո՛ւ մեր հաւատը»։ [7]Եւ Տէրն ասաց.
«Եթէ մանանեխի հատիկի չափ հաւատ ունենաք եւ
այս թթենուն ասէ՛ք՝ «Արմատախի՛լ եղիր եւ տնկուի՛ր
ծովի մէջ», նա՛ իսկ կը հնազանդուի ձեզ»։ [8]«Իսկ
ձեզնից ո՞վ, որ հողագործ կամ հովիւ ծառայ ունի, երբ
սա ագարակից տուն մտնի, նրան կ՚ասի իսկոյն՝
«Անցի՛ր սեղան նստիր». [9]այլ նրան չի՞ ասի՝
«Պատրաստի՛ր, ինչ ընթրելու եմ, եւ գօտի կապած՝
ծառայի՛ր ինձ, մինչեւ որ ուտեմ եւ խմեմ, եւ ապա
կ՚ուտես եւ կը խմես դու»։ [10]Միթէ տէրը շնորհապա՞րտ
կը լինի այդ ծառային, որ իր բոլոր հրամանները
կատարեց։

Մանկական էջ..

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Գ Ի Ր

Մոսկվայի հայ կաթողիկե
եկեղեցու Խորհուրդը,
ժողովրդապետությունը՝ ի դեմս ժողովրդապետ
ծայրագույն վարդապետ Պետրոս Պետրոսյանի
շնորհավորում է խորհրդի անդամ, համայնքի
պատվավոր ներկայացուցիչ, նվիրյալ հավատացյալ
Արամ Վաղինակի Ղազարյանին ծննդյան տարեդարձի
կապակցությամբ:
Մեր պատվարժան հայրենակցին մաղթում ենք
իմաստնության և խորաթափանցության
բազմապատկում, առողջություն,
նորանոր բարձունքների նվաճում:
Վարդապետական օրհնությունը Ձեզ և
Ձեր ընտանիքին:
Ծ.Վրդ.Պետրոս Պետրոսյան
14.12.14թ.

ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ՔԱՐՈԶԸ

Եթե եղբայրդ մեղանչի, սաստի՛ր նրան և եթե զղջա, ների՛ր նրան; Եվ եթե յոթն անգամ մեղանչի քո դեմ և յոթն անգամ դառնա քեզ և ասի՝ զղջում եմ, ների՛ր նրան (Ղուկ. 17:4):

Անհնար է, որ գայթակղություն չգա, անհնար է, որ բարու և չարի պայքար չլինի, անհնար է, որ սատանան ձեզ չփորձի, բայց դուք հաստատուն եղեք:

Յուրաքանչյուր ոք, կարող է իր անձի դատավորը լինել: Ով կամենում է վնասել ուրիշներին, նախ իրեն է վնասում. որովհետև անհնար է առանց սեփական վնասի ուրիշներին վնաս հասցնել, քանզի չարը նախ այն խորհողի համար է չար:

Երբ տեսնում ենք մեր եղբոր կամ ընկերոջ զղջումը կամ սխալը ընդունելու պատրաստակամությունը, պետք է ներենք նրան, որպեսզի նրա մեջ վերահաստատվի Քրիստոսի սերն ու խաղաղությունը:

Մարդու աստվածանմանության կարևոր արտահայտություններից է մարդասիրությունն ու ներողամտությունը: Մարդասեր լինել նշանակում է նմանվել Աստծուն:

Մարդու կյանքը թեկուզ բազում տարիներ տևի, միևնույն է, կարճ է: Թվում է, թե երկրի վրա մարդու կյանքը երեք օր է, մի օր՝ ծննդյան, մի օր՝ մահվան, և մի օր էլ՝ նրա կյանքի ամբողջ ժամանակը, լինի երկար, թե կարճ: Բայց ավելի թվում է երեք վայրկյան. մարդը ծնվում է մի վայրկյանում, ապրում մի վայրկյան, մեռնում՝ մի վայրկյանում, որովհետև ամեն վայրկյան էլ հնարավոր է, որ մեռնի:

Սրանից հետևում է, որ աշխարհում մարդկանց կրած վայելքն ու տանջանքը վայրկենական են: Ուստի մեծ անմտություն է վայրկենական վայելքի կամ տանջանքի համար Աստծու հանդեպ մեղանչել, որովհետև երկուսն էլ մի վայրկյան են տևում և իսկույն անցնում: Ուստի պետք է ջանալ բարի ու օգտակար բաների համար գործածել այն ժամանակը, որն ունենք:

Առաքյալներն ասացին Տիրոջը. Ավելացրո՛ւ մեր հավատը:

Մեր Եկեղեցու մեծագույն հայրերից՝ Հովհաննես Երզնկացին ասում է. «Հավատը լուսեղեն ամպերի անմարմին պարանն է Աստծու կողմից երկնքից իջած մարդկանց համար: Հավատը մարդու սրտում արմատացած տունկն է, որի արմատը՝ Հայրն է... ոստը՝ Որդին,.. ծաղիկը՝ Սբ. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են, որովհետև պտուղը արմատից, ոստից ու ծաղիկներից է առաջ գալիս, ինչպես բարի գործերը՝ հավատից»:

Ծառայի պարտականությունը:

Այն է Աստծու հանդեպ կատարյալ ծառայությունը, որն առաջ է գալիս միայն Աստծու հանդեպ սիրուց, իսկ ճշմարտապես սիրողը հանձն է առնում կորցնել ունեցվածք, պատիվ, սիրելիներին և նույնիսկ իրեն՝ չկորցնելու համար Աստծու հանդեպ սերը:

Ռուսաստանի հայ կաթողիկե եկեղեցու ընդհանուր
տեղապահ, Մոսկվայի հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ
Ծ.Վրդ. Հայր Պետրոս Պետրոսյան
Մոսկվա , 14 դեկտեմբերի 2014թ.

2. Երկրորդ մասում ձեր ուշադրությանը կներկայացնենք Հայոց լեզվի դպրոցի սաների և մեր համայնքի այլ երեխաների պատրաստած անակնկալ ելույթները:
3. Այնուհետև Զմեռ Պապն ու Զյունանուշը կշնորհավորեն գալիք Նոր Տարին:

Ողջ միջոցառման ընթացքում կներկայացվի Ցուցահանդես, որտեղ դուք կարող եք մոտենալ ծանոթանալ ցուցադրություններին և գնումներ կատարել, ինչպես նաև Ձեր բարեգործական ներդրումը կատարել մեր եկեղեցու ֆոնդին: Հրավիրում ենք բոլոր նրանց, ովքեր անտարբեր չեն հայ եկեղեցու, հայկական դպրոցի, հայերեն լեզվի և մշակույթի հանդեպ: Միջոցառումը տեղի կունենա Եկեղեցու Կուրիայի դահլիճում, սկիզբը՝ ժամը 18:00:

«ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Բարեգործական երեկո 21դեկտեմբերի 2014թ.

Մոսկվայի հայ կաթողիկե եկեղեցու ամենամյա բարեգործական միջոցառումը 2014թ.ին կրում է ***«Մեր եկեղեցին մեր երեխաների համար»*** խորագիրը: Անվանումը պատահական չէ ընտրված: Ավանդաբար եկած կենսակերպ է, հայն ապրում է իր երեխայի համար և իր երեխայով: Մայր եկեղեցին հոգ է տանում իր բոլոր զավակների համար՝ սնելով հոգևոր և ազգային մանանայով: Միջոցառմանը ելույթ կունենան մանուկներն ու երիտասարդները՝ ցույց տալու համար, թե ինչքան կարևոր է իրենց համար մայր եկեղեցու միավորող հարկի տակ լինելը:

Միջոցառումը բաղկացած է 3 մասից.

1. Առաջին մասում կներկայացվեն զեկույցներ մեր ժողովրդապետության ծրագրերի, Բարեգործության գաղափարախոսության մասին: Զեկուցողներ՝ Եկեղեցու խորհրդի անդամներ Պ.Ակոպով, Ա.Ղազարյան, Գ.Մովսեսյան, Է.Էթմեքչյան:

Վրեժ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՄՇԵՑԻ ՇՈՂՈՆ (Իրական փաստերի վրա հիմնված)

Մշո դաշտում Վարդավառ էր: Մեղրագետը, զմրուխտյա սարերում քարերին համբույր բաշխելով, մե՛կ թռչկոտելով, մե՛կ շորորալով, մտնում էր Վարդենիս գյուղը: Արևի ոսկեշղարշ շողերը շաղվել էին Մեղրագետի զուլալ կոհակներին: Սիրահար տղաները, մտքում հազար մուրազ, երգելով ջուր էին ցողում նազող աղջիկներին՝ սեր ու ժպիտն էլ հետը, իսկ մտքում՝ նաև տա՛ք համբույր:

Վարդն ի բացվե առավոտյան շաղերով,
Իմ յար բախչեն վարդ կքաղի մաղերով,
Վարդն ի բացվե Վարդևորան կիրակին,
Քո սերն ընկե մեջ իմ սրտի պուրակին:

Մեղրագետի ջրով ցողված՝ սիրահար աղջիկները պատասխանում են.

Այ տղա՛, սիրո՛ւն տղա,
Քեզ հազա՛ր բարով տեսա,
Շեն կենա էս Վարդևոր,
Սրտիս մուրազին հասա:

Մեղրագետը հիշողության կծիկն էր քանդել: Նրա արևոտ կոհակներում Վիշապաքաղ Վահագնի ու սիրո դիցուհի Աստղիկի աչքերն էին ժպտում: Հին աստվածներն էին իջել Մշո դաշտ՝ ինչպես հազար ու հազար տարի առաջ:

-Աղջիկնե՛ր, Մեղրագետի ջուրը կարմրավ,- ճչաց Շողերն, ու աչքերը քարացան. գետը դիակներ էր բերում:

Թուրքերից, քրդերից ու Դաղստանի չեչեններից կազմված հավաքական խուժանը լցվել էր Վարդենիս: Գյուղը մեծ էր, այստեղ էին դպրոց գալիս նաև հարևան տասը բնակավայրերի երեխաները:

-Առողջ տղաներին տարեք ինիչերի, մնացածներին լցրեք գետը, ջուրը կմաքրի հետքերը, իսկ մեծերին քշեք հարևան Ավզուտ գյուղը՝ Մալխասի Մարդոյի մեծ գոմերում վառելու,- գոռում էր արնախում թուրք հրամանատարը: Քրդերն արդեն սկսել էին երանելի թալանը: Փողոցներում հազարավոր կով, գոմեշ, այծ ու ոչխար իրար խառնած, Ալլահին փառք տալով՝ խուժանը գյուղի ունեցվածքն էր բաժանում: Մի քանի թուրք տաղասացներ Աբրահամի ձեռքերը ոլորեցին, իր տասնոց զենքով սպանեցին, վիզը յաթաղանով կտրեցին, հետո

պարանը մեջքին գցելով՝ կապեցին ձիուց ու տարան դեպի վառվող մարագը: Կնոջ՝ Ալթունի քնքուշ սիրտը նույն պահին պայթեց, բերանից հոսող արյան մի քանի կաթիլ ընկավ մարդասպանի պիղծ ձեռքին: Շողերն ու երեքամյա Հովհաննես եղբայրը վազեցին աչքերը բաց մնացած մոր մոտ: Բոլորին տարան Ավզուտ:
Մարդոյի գոմերի կողքերը տանիքից իջեցրած խոտի դեզերը փռեցին, նավթ լցրին ու կրակ տվին: Կրակի լեզվակները և ծուխը լցվում էին ներս: Լացուկոծ, անօգնական ճիչեր, գոռոց, անեծք ու հայհոյանք խառնվել էին իրար, ոտքերի տակ երեխաներ էին տրորվում, մարդիկ խուճապահար պատեպատ էին զարկվում, դուրս պրծնելու հնար փնտրում: Կրակը մոտենում էր. շատերն արդեն ծխախեղդ էին: Հարյուր տարեկան կինը, ում Փոլո Արշակի զոքանչ էին ասում, ծխի միջից գոռաց. «Ժողովո՛ւրդ, էրեխեքին զոռով գետնին պառկեցրեք քիթուբերանին, մերերով պառկեք երեխեքի վրեն, որ ծխից չխեղդվին, Աստված մեծ է...»: Հետո մարեն երեքամյա Հովհաննեսին պառկեցրեց գետնին, իր գոգնոցով դեմքը փակեց ու, դողացող Շողերին հրելով, պառկեցրեց եղբոր վրա:
-Լաո՛, լալով բան դուրս չի գա, էնպես անենք, որ ամեն օջախից գոնե մի տղա էրեխա փրկվի, որ էդ տան ծուխ չմարի,- թանձր ծխի միջից գոռում էր մարեն:- Ժողովո՛ւրդ, ձեր հույս մի կտրեք, Աստված դռները որ փակում է, մեկը միշտ բաց է մնում:
Շողերը ողջ մարմնով ընկել էր եղբոր վրա: Հովհաննեսը գոռում էր, աղաչում, որ քույրը թողնի, բայց մարեի խոսքը սթափեցնում էր նրան: Օդի պակասությունից Հովհաննեսը ուշաթափվեց: Գոմի գերաններն արդեն վառվել էին, տանիքը փլվեց, մեծ երդիկ բացվեց: Բոցն ու ծուխը փլվածքից դուրս եկան, օդ ներս եկավ, շնչելու հնար եղավ: Շողերն ու իր հորեղբոր աղջիկը՝ Արեգը, ուշաթափված Հովհաննեսին, ոտք ու ձեռքից բռնած, ծուխ ու կրակի միջից բացված անցքով նետեցին տանիք: Վառված ու կիսաածխացած թեք ընկած այրող գերանների վրայով Շողերն ու Արեգը, սողալով ու ճանկռելով, փլվածքը բարձրացան: Ներքևում թուրք զինվորները շուրջպար էին բռնել, թրերն իրար զարկելով, արյունով արբած, պարում էին ու երգում. «Յուրի յանդըմ, յուրի...»: Արյան խրախճանքից պարող ու

երգող մարդասպանների ուղեղներն արդեն մթագնել էին, էքստազի մեջ էին և չնկատեցին, թե ինչպես Շողերը, ուշագնաց եղբորը շալակն առած, փախավ մոտակա շամբուտը: Թարմ օդից, հողի խոնավությունից և Շողերի համբույրներից Հովհաննեսը ուշքի եկավ: Շողերն աղաչում էր եղբորը, որ լաց չլինի: Մի քանի ժամ անց փրկարար մութը ծանրացավ շամբուտին: Շողերը, եղբորը շալակն առած, սարսափահար փախչում էր: Մութ էր, չգիտեր ուր է վազում. միայն թե էդ դժոխքից հեռու գնար: Մթի մեջ ձայներ լսեց: Մի՞թե նորից ասկյար պիտի տեսնի: Սարսուռը պատեց իրեն, ափով պինդ փակեց եղբոր բերանը: Ականջը դիմացից եկող ձայնին էր: Շողերը հայերեն բառեր լսեց, քարացած արյունը սկսեց շարժվել երակներում, ճչաց ու, Հովհաննեսին գրկած, վազեց ձայնի ուղղությամբ: Դիմացից եկողները Անդրանիկ Զորավարի զինվորներն էին, կենդանի մնացածներին էին որոնում: Մի քանի ժամ Շողերը աչքերին չէր հավատում:
Օր չկար, որ թուրքի ու քրդի ջոկատ չկտրեր իրենց ճամփան: Առջևից Զորավարն էր գնում: Գաղթականների խմբի հետ Շողերն ու Հովհաննեսը հասան Պարսկաստան՝ Խոյ, հետո՝ Նախիջևան, Ղարաբաղ, Կապան, Գորիս, Սիսիան, Սևան:
Սովն ու համաճարակը կյանքեր էին հնձում: Գորիսի Աղուդի և Վաղուդի գյուղերի մոտ գաղթականները լցվեցին օրեր առաջ հնձած արտը՝ գետնին մնացած հասկերն ու ցորենի հատիկները հավաքելու: Ամեն մեկը մի քանի կիլոգրամ հավաքել էր: Տասը երեխա, ոգևորված իրենց հավաքած բերքով, շտապեցին ձորի ջրաղաց՝ ցորենը աղալու: Ժամեր անց դեռ չկային: Ծնողներն անհանգստացան, մի քանիսը գնացին ջրաղացի ուղղությամբ: Արյունը սառեց նրանց երակներում: Տեղի թուրքերը երեխաներին լցրել էին ջրաղացի մեծ բուխարիկն ու վառել: Ջրաղացի կանգնած քարին հասկերով ու հատիկներով լի նրանց տոպրակներն էին շարված: Լուրն անմիջապես հասցրին Անդրանիկին: Զորավարը մռայլվեց, գլխարկը հանեց, չոքեց գետնին ու երդվեց. «Էդ անմեղ էրեխեքի արյուն անվրեժ չեմ թողնի»:

շարունակելի, աղբյուրը՝ http://www.irates.am/hy/1399968969
http://www.genocide.ru/